## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՄԻՋԵՎ «ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻ» ԿԻՐԱՐԿՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ (ՎԱՎԵՐԱՑՄԱՆ) ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտը (ՏԱԿՏԱ նախատեսում է «ԱՄՆ անձանց»՝ արտասահմանում գտնվող հաշիվների բացահայտման նպատակով ԱՄՆ հարկային մարմնի և օտարերկրյա ֆինանսական հաստատությունների համագործակցությունը: Ընդհանուր առմամբ, այս համագործակցության շրջանակներում օտարերկրյա, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսական հաստատություններից ակնկալվում է ԱՄՆ հաշիվների վերաբերյալ տարեկան հաշվետվությունների ներկայացում և անհրաժեշտության դեպքում պահումների իրականացում: ԱՄՆ հաշիվների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման նպատակով Հայաստանի Հանրապետության ֆինանսական հաստատությունները պետք է ներդնեն հաճախորդների իդենտիֆիկացիայի և պատշաճ ուսումնասիրության լրացուցիչ մեխանիզմներ: Ըստ էության, FATCA-ի պահանջների կատարումը հայաստանյան ֆինանսական հաստատությունների համար կենսական նշանակություն ունի, քանի որ միայն այդ դեպքում Հայաստանի Հանրապետության ֆինանսական հաստատությունները կպահպանեն ԱՄՆ բանկային համակարգի հետ ֆինանսական հարաբերությունները՝ հնարավորություն ստանալով իրականացնելու դոլարային արժույթով գործարքներ և մուտք ունենալու դեպի ԱՄՆ կապիտալի շուկա: FATCA–ի պահանջների կատարումը հնարավորություն կտա նաև խուսափելու ակտով նախատեսված 30% պահումներից: FATCA-ի ներդրումը որոշակի գործողությունների կատարում է ենթադրում նաև կարգավորող և վերահսկող մարմինների կողմից: Մասնավորապես, ամերիկյան հարկային մարմինները առաջարկում են միջկառավարական համաձայնագրերի 2 մոդել, որոնք կսահմանեն կարգավորող և վերահսկող մարմինների և ամերիկյան հարկային մարմինների միջև համագործակցության մեխանիզմները: Մոդելների տարբերությունը կայանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսական հաստատությունների համար համապատասխանության և ԱՄՆ հարկային մարմինների հետ առնչության մակարդակների մեջ: ԱՄՆ հարկային մարմնի հրապարակած FATCA-ի կանոնակարգերի համաձայն, այն ֆինանսական հաստատությունները, որոնք սահմանված ժամկետներում չեն գրանցվել ԱՄՆ հարկային մարմնի միասնական պորտալում որպես FATCA–ի պահանջներին համապատասխանող ֆինանսական հաստատություններ և չեն ստացել գլոբալ միջանկյալ նույնականացման համար (GIIN), կհամարվեն չհամագործակցող ֆինանսական հաստատություններ:

Չհամագործակցող ֆինանսական հաստատությունների կողմից կատարվող փոխանցումների նկատմամբ կկիրառվեն ակտով նախատեսված 30% պահումները: Այդպիսի ֆինանսական հաստատությունները կզրկվեն ԱՄՆ կապիտալի շուկա մուտք գործելու և դոլարային արժույթով գործարքներ կատարելու հնարավորությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2018թ. փետրվարի 12-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի» կիրարկմանն օժանդակելու համագործակցության մասին» համաձայնագրի հաստատումը (վավերացումը) Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականության առումով նպատակահարմար է:

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ** **ԱՐՄԵՆ ՊԱՊԻԿՅԱՆ**